

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի» Ա/Ձ-ն(այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաբերք-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Քոչար 27 և 27ա շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաբերք-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:



3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:



3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալառչեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարելան հրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողով



Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **81 420 000 (ութսունմեկ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_4 = \frac{V_4}{1 + 4\%}$, որտեղ՝

V_4 -ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

V_4 -ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

V_4 -ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

V_4 -ն ծավալաբեր-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:



6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուր երրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույնպայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:



Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

ՀՀ 900032313174

ՀՀ 02593108

Վ. Պապիկյան

(ստորագրություն) Վ.Ս.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/2
Հասցե ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.
Աշտարակ, Վ. Պետրոսյան 1/3
Բանկը Յունիբանկ ԲԲԸ Աշտարակ մ/6
Հ/Հ 24122007725900
ՀՎՀՀ 54638304

Ե. Ալմազյան

(ստորագրություն) Վ.Ս.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

< / <	ԳՄԱ կող (CPV)	Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակնե րի հիմնանորոգում, ընդ որում՝	Տեխնիկական բնութագիր	ընդհանու ր գինը /ՀՀ դրամ/	Կատարման ժամկետ է համարվում սույն աշխատանքների պայմանագիրը և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման համար սահմանվում է նշված օրը ներառյալ
6	45611300/89	Քոչար 27 և 27ա շենքերի բակ	Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների ծավալաբերով նախատեսված ծավալներին և ձևին համապատասխան: 1. Ընթացակարգին մասնակից կազմակերպությունը գնի առաջարկը սահմանելու նպատակով իրավունք ունի նախորդը այցելելու շին հրապարակ: 2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/ երկու / աշխատանքային օրվա ընթացքում: 3. Աշխատանքները իրականացնող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականացնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները: Հին հրապարակը պետք է առանձնացվի հատուկ պարսպով. 4. Աշխատանքները կատարել երեք փուլերով՝ ա/ առաջին փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 50 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 30%-ը բ/ երկրորդ փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 80%-ը գ/ երրորդ ավարտական փուլում միջև պայմանագրի վերջնաժամկետը կատարել մնացած աշխատանքները 100%-ով:	81 420 000	150 օրացուցային օր

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎ*
6-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Քոչար 27 և 27ա շենքերի բակի հիմնանորոգման
աշխատանքների

h/h	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավորը e/и	Ըստ ծավալաբերության		
			Ծավալը обем	Միավորի ընդհանուր արժեքը Цена единицы hawk. դրամ тыс. Драм	Ընդհանուր արժեքը Всего hawk. դրամ тыс. Драм
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ Демонтажные работы				
1	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ Демонтаж бетонных бордюров /бетонного основания/	գմ м	466	1.3165773285130000	613.525
2	Բետոնե սալահատակի քանդում Демонтаж бетонных плит	մ2 м2	369	0.6419556587196720	236.882
3	Ստալարանների ապամոնտաժում Демонтаж скамеек	հատ шт	13	2.2522675092252700	29.279
4	Ծառերի արմատահատում /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Выкорчевка деревьев /по согласованию с заказчиком/	հատ шт	5	0.8660313703948800	4.330
5	Ասֆալտբետոնե շերտի քանդում/1500քմ/ Снос асфальтобетонного слоя	մ3 м3	75	5.5150098029541400	413.626
6	Հանքաձյուղով տոգորված խճային ծածկույթների քանդում/1500քմ/ Снос битумно-битумной пропитки	մ3 м3	180	0.9221295862515410	165.983



7	Ֆուտբոլի դաշտի փայտյա ցանկապատի ապամոնտաժում Демонтаж деревянного ограждения футбольного поля	մ3 м3	2.95	35.0964658824169000	103.535
8	Ֆուտբոլի դարպասների ապամոնտաժում Демонтаж футбольных ворот	տ тн	0.18	52.6133321626627000	9.470
9	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	զմ м	158	0.7002617542269950	110.641
10	Մետաղական հենասյուների ապամոնտաժում Демонтаж металлического забора	հատ шт	7	9.4193504706661500	65.935
11	Բնահողի մշակում ձեռքով/հողի շերտի հանույթ/ Обработка почвы вручную/извлечение слоя почвы/	մ3 м3	99.5	5.8049091302618800	577.588
12	Գոյություն ունեցող խաղաասարքերի ապամոնտաժում Демонтаж существующего игрового оборудования.	տ тн	0.65	64.2972650796294000	41.793
13	Մետաղական զրուցատաղավարների ապամոնտաժում Демонтаж металлических чатов	տ тн	0.78	81.9367302628658000	63.911
14	Բետոնե հիմքերի քանդում Снос бетонного фундамента	մ3 м3	36.9	22.9272669744631000	846.016
15	Խաղողի թառմաների ապամոնտաժում /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Демонтаж виноградных лоз /по согласованию с заказчиком/	մ2 м2	18	6.6071914676175000	118.929
16	Պողպատե խողովակների ապամոնտաժում Демонтаж стальных труб	զմ м	158	0.3876964070980840	61.256
17	Շին. աղբի հավաքում, բարձրում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ Погрузка строй. мусора, излишней почвы, на самосвалы и и транспортировка до 13 км	տ тн	1158.1	4.6906277428541000	5432.216
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				8894.917
	Կառուցողական աշխատանքներ Строительные работы				
	Խաղահրապարակում ռետինե ծածկույթի իրականացում Выполнение резинового покрытия на детской площадке				
1	Խճի մախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня	մ3 м3	11.2	10.5966675949094000	118.683
2	Ե/բ մախաշերտի պատրաստում В12.5 դասի բետոնից Выполнение железобетонного предварительного слоя	մ3 м3	5.6	44.8428945095187000	251.120
3	Ամրանացանցի տեղադրում Ф4ВрI ամրանից Монтаж арматурной сети	տ тн	0.2128	25.6621208391514000	5.461
4	Ամրանացնց Ф4ВрI, ք.150x150մմ արմատային ցանցի	մ2 м2	112	1.0351592253580200	115.938
5	Միաձուլվող ռետինե ծածկույթի իրականացում 15մմ հաստ./հարթեցումը և փռումը իրականացնել հատուկ տեխնիկայի միջոցով/հարթեցում-տաքացվող գլորն-կատուկ/փռում-հատուկ տեխնիկայի միջոցով/ Выполнение сплошного резинового покрытия толщиной 15 мм.	մ2 м2	112	24.8391029408751000	2781.980
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				3273.181



	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300մմ /առանց ծակոտկեն/ Установка базальтовых бордюров 150*300мм/непористый/				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 7 см	մ3 m3	1.815	10.6136395603293000	19.264
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300մմ/առանց ծակոտկեն/ Установка базальтовых бордюров 150*300мм/непористый/	զմ m	104	16.8310133778752000	1750.425
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				1769.689
	Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100 մմ չափերով /առանց ծակոտկեն/ Установка базальтовых бордюров 200x100 мм (непористый)				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 5 см	մ3 m3	5.22	10.6136395603293000	55.403
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100մմ չափերի/առանց ծակոտկեն/ Установка базальтовых бордюров 200x100 мм (непористый)	զմ m	522	9.7041700495718800	5065.577
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				5120.980
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ Асфальтобетонные работы				
1	Խճային հիմք Н=12սմ Поролоновая основа толщиной 12 см	մ2 m2	1382	1.4538608039086500	2009.236
2	Բիտումի լցում խճի վրա 1382 մ2 (4.12տ/1000մ2) Заливка битума на гравий	տ th	5.694	256.0275128916480000	1457.821
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение слоя зернистого асфальтобетона толщиной 5 см.	մ2 m2	1382	4.9196259234452600	6798.923
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				10265.979
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ մայր Асфальтобетонные работы тротуар				
1	7 սմ հաստությամբ խճե շերտի իրականացում Поролоновая основа толщиной 7 см.	մ2 m2	118	1.1539909290266300	136.171
2	Ավազակաշալին խտնուրդից պրոֆիլի ուղղում Исправление профиля из песчано-гравийной смеси	մ2 m2	118	0.6173262813440580	72.845
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ Выполнение мелкозернистого асфальтобетонного покрытия толщиной 3 см.	մ2 m2	118	3.0918587974249800	364.839
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				573.855



	Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում- գունավոր/Старый город/-արտաքին մեկերնույթը ջնարակապատված Монтаж бетонной плитки (томет)- цветная/Старый город/-наружная поверхность застекленная				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 5 см	մ3 м3	21.95	10.6136395603293000	232.969
2	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստությամբ զ/ա շաղախով Сглаживающий слой под бетонными плитами цементно-песчаным раствором толщиной 4 см	մ3 м3	17.56	28.6184449057674000	502.540
3	Սալիկապատում բետոնե սալիկներով 5սմ հաստությամբ/Старый город/ արտաքին մեկերնույթը ջնարակապատված Мощение бетонной плиткой толщина 5 см/Старый город/ внешняя поверхность застекленная	մ2 м2	439	11.0118407700101000	4834.198
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				5569.707
	Դիտահորերի նիշերի ուղղում Исправление персонажей сторожевых вышек				
1	Դիտահորի ծածկի սալերի ապամոնտաժում Демонтаж крышек сторожевой башни	հատ шт	4	6.4487810014994200	25.795
2	Դիտահորերի պատերի բարձրացում միաձույլ B15 դասի բետոնով, մինչև 6սմ Возведение стенок колодцев бетоном класса B15	մ3 м3	0.6	94.7413282382224000	56.845
3	Դիտահորի ապամոնտաժված ծածկի սալի տեղադրում Установка демонтированной плиты крышки люка	մ3 м3	4	16.0169924129257000	64.068
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				146.708
	Այլ աշխատանքներ Другие работы				
1	Նոր փայտյա նստարանների ձեռք բերում և տեղադրում/համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Покупка и установка новых деревянных скамеек	հատ шт	21	236.9479963985750000	4975.908
2	Նոր մետաղյա աղբամանների ձեռք բերում և տեղադրում/համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Покупка и установка новых металлических бункеров	հատ шт	19	67.4549914724069000	1281.645
3	Նոր մանկական խաղասարքի ձեռքբերում և տեղադրում /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка новой детской игрушки	կ/տ с/т	1	1,959.9788979429500000	1959.979
4	Նոր մանկական խաղասարք /պտտվող կառուսել/-ի ձեռք բերում և տեղադրում/ Romana 108.27.02-կամ համարժեք- ներկայացնել սերտիֆիկատ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка новой детской игрушки /вращающейся карусели/ /по согласованию с заказчиком/	հատ шт	1	923.3678363642340000	923.368



5	Նոր մանկական խաղասարք /ճոճվող հավասարակշիռ/-ի ձեռք բերում և տեղադրում/Romana 108.50.00-02/-կամ համարժեք-ներկայացնել սերտիֆիկատ/ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка новой детской игрушки (качели на пружине) /по согласованию с заказчиком/	հատ շտ	1	505.2390048030710000	505.239
6	Նոր մարզասարքի ձեռքբերում և տեղադրում/նորբերի մարզիչ/Romana 207.50.10/-կամ համարժեք-ներկայացնել սերտիֆիկատ/ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка нового тренажера/тренажера для ног/ /по согласованию с заказчиком/	կ/տ с/т	1	644.6152819901250000	644.615
7	Նոր մարզասարքի ձեռքբերում և տեղադրում/Էլիպսաձև մարզիչ/Romana 207.50.10-կամ համարժեք-ներկայացնել սերտիֆիկատ/ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка нового спортивного инвентаря/пыж/ /по согласованию с заказчиком/	կ/տ с/т	1	644.6152819901250000	644.615
8	Նոր մարզասարքի ձեռքբերում և տեղադրում/Бицепс մարզիչ/Romana 207.44.10-կամ համարժեք-ներկայացնել սերտիֆիկատ/ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/ Приобретение и установка нового тренажера/платформы для тренировок/ /по согласованию с заказчиком/	կ/տ с/т	1	775.2805418529890000	775.281
9	Նոր մետաղական զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում 3x4մ չափերով, սեղանով, նստարաններով Покупка/подготовка и установка новой металлической переговорной комнаты размером 3*4м, со столом и скамейками	հատ շտ	2	740.6868529988820000	1481.374
10	Ցայտադրյալի տեղի բետոնացում B15 դասի բետոնով Бетонирование площадки фонтана бетоном марки B15.	մ3 м3	0.9	56.4960426667549000	50.846
11	Ցայտադրյալի հարթակի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ., /առանց ծակոտկոն/-ծայրերի եզրային հզկումով Облицовка фонтанной площадки базальтовыми плитами толщиной 30 мм /без перфорации/ с контролем кромки	մ2 м2	2.5	19.3811242920042000	48.453
12	Այգու մետաղական ճաղաշարի վերանորոգում Ремонт садового металлического забора	տ тн	0.45	68.9352614362862000	31.021
13	մետաղական էլեմենտներ металлические элементы	տ тн	0.45	718.6589292457480000	323.397
14	Այգու ամրա ճաղաշարի յուղաներկում երկու շերտ Два слоя масляной краски на существующем садовом заборе.	մ2 м2	86	1.6325745794395300	140.401
15	Այգու արտաքին բետոնյա եզրաքարերի վրա բետոնե հենապատի կառուցում /շապիկի տեղում/ B15 դասի բետոնով /ամրանացանցի տեղադրումով/ Строительство бетонной подпорной стенки на наружном бетонном бордюре сада /в виде покрытия/ из бетона марки B15 /с армирующей сеткой/	մ3 м3	10.5	58.9323582865486000	618.790



16	Ամրանացնց Փ4ВрI, p.100x100մմ Арматура Ф4ВрI, квадрат 100x100мм	մ2 m2	45.4	1.1498542867932000	52.203
17	Ամրան Փ20A500C Амран Ф20A500C	տ th	0.155	406.5141417955750000	63.010
18	Նույնի երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка то же базальтовыми плитами толщиной 30 мм./непористая/	մ2 m2	18	35.1400447740182000	632.521
19	Բազալտե վրադիր քարերի տեղադրում 30մմ b=300մմ/առանց ծակոտկեն/ Монтаж базальтового облицовочного камня 30мм b=300мм/непористый/	մ2 m2	18	45.3740163465606000	816.732
20	Առկա բետոնյա հենապատի նորոգում B15 դասի բետոնով /ամրանացանցի տեղադրումով/ Ремонт существующей бетонной подпорной стены бетоном марки B15 /монтаж армирования/	մ3 m3	0.85	58.9323582865486000	50.093
21	Ամրանացնց Փ4ВрI, p.100x100մմ Арматура Ф4ВрI, квадрат 100x100мм	մ2 m2	8.5	1.1498542867932000	9.774
22	Նույնի երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка то же базальтовыми плитами толщиной 30 мм./непористая/	մ2 m2	8.5	35.1400447740182000	298.690
23	Բազալտե վրադիր քարերի տեղադրում 30մմ b=300մմ/առանց ծակոտկեն/ Монтаж базальтового облицовочного камня 30мм b=300мм/непористый/	մ2 m2	3	45.3740163465606000	136.122
